Աշխատանքի ծածկագիր 2568

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 20-րդ, 22-րդ, 25-րդ, 29-րդ և 37-րդ հարցերը:

<u>Քրեական դատավարության բաժին</u>

Հարց 3

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը այն է՝ *եթե կան այլ հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, որը քրեական վարույթն իրականացնող մարմնից*

թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *եթե նա գտնվում է ազատության մեջ և քննիչը որոշում է կայացրել նրան կալանավորելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ճիշտ տարբերակը հարցի ամբողջական և լիարժեք պատասխան է, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 4

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք և տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը գ-ն է, այն է՝ *անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք, տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ և առկա է հարուցված քրեական գործ:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ա>> տարբերակում բացակայում է քրեական գործի հարուցված լինելու հանգամանքը, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կաող համարվել լիարժեք և ընդունելի:

Հարց 7

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը այն է՝ *մեղադրյալի ազգականը վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման կայացման պահից երկօրյա ժամկետում վճարել է գրավի գումարը,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *<<ա>>, <<բ>> և <<գ>> կետերում նշված դեպքերում:* Նշվածից երևում է, որ հարցադրման մեջ բոլոր տարբերակները ճիշտ են և քանի որ, հավակնորդը նշել է ճիշտ տարբերակներից միայն մեկ, ապա այն չի կարող համարվել լիարժեք և ճիշտ պատասխան:

Հարց 8

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *եթե կալանքի տակ գտնվող ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *բոլոր պատասխանները*

ճիշտ են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցադրման մեջ նշված պատասխանները բոլորն էլ ճիշտ են իսկ հավակնորդը նշել է այդ տարբերակներից միայն մեկ, ապա այն չի կարող համարվել լիարժեք և ճիշտ պատասխան:

Հարց 10

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է մեղադրյալի կողմից, և դրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են մեղադրյալին վերագրվող արարքին,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *և՛<<ա>> և՛ <<գ>> կետերում նշված անձանց:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցադրման մեջ նշված պատասխաններից ճիշտ են և՛<<ա>> և՛ <<գ>> կետերը իսկ հավակնորդը նշել է միայն <<ա>> տարբերակը, ապա այն չի կարող համարվել լիարժեք և ճիշտ պատասխան:

Հարց 12

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *իր նախընտրած ցանկացած լեզվով, իսկ ռուսերեն լեզվով հանդես գալու դեպքում դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ, երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը,* մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝ *իր նախընտրած ցանկացած լեզվով, սակայն ռուսերենով հանդես գալու դեպքում պարտավոր է իր հաշվին ապահովել թարգմանությունը, քանի որ տիրապետում է հայերենին,* քանի որ խնդրի նկարագրությունից երևում է, որ Ա.Պետրոսյանը <u>տիրապետում է</u> հայերեն լեզվին և ռուսերեն լեզվով հանդես գալը եղել է իր ցանկությունը, հետևաբար ռուսերեն լեզվով հանդես գալու դեպքում պարտավոր է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

Հարց 13

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ *բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցադրման մեջ նշված տարբերակներից միայն մեկն է ճիշտ, այն է՝ ա-ն՝ *հայցը թողնել առանց քննության՝ իրավունք վերապահելով քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով,*

հետևաբար հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հարց 20

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը:* Քանի որ մեղադրական եզրակացությունը դատախազին վերադարձնելու դատավարական ընթացակարգ չկա, հետևաբար Հանձնաժողովը փաստում է, որ նշված առաջադրանքում ճիշտ պատասխանը բացակայում է, այսինքն ճիշտ պատասխանն է <<դ>> տարբերակը:

Հարց 22

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *ոչ, քանի որ փուժողին առաջինը հարցեր տալու իրավունք ունեն մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտները:* Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 25

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *տեղանքի և շենքի զննության:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղանքի և շենքի զննություն քննչական գործողության արդյունքները նույնպես մտցվում են դատական նիստի արձանագրության մեջ, այդ իսկ պատճառով հարցադրման մեջ առկա կետերից և ոչ մեկը չի կարող համարվել ճիշտ պատասխան: Հետևաբար ճիշտ պատասխանը <<դ>> կետն է, այն է՝ *ճիշտ պատասխանը բացակայում է:*

Հարց 29

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան*

պարճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ քննիչը համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինի ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ **կարող է** նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> **եզրույթը չի կարող համարվել որպես** <<**պարտադիր**>>: Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 37

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *եթե դատական քննության ընթացքում հայտնվում է ամբաստանյալը և ներկայանում դատարան,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *բոլոր պատասխանները ճիշտ են*: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցադրման մեջ նշված պատասխանները բոլորն էլ ճիշտ են իսկ հավակնորդը նշել է այդ տարբերակներից միայն մեկ, ապա այն չի կարող համարվել լիարժեք և ճիշտ պատասխան:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2568 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 22-րդ և 29-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

_____ Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ